Ս. Ակիւլինէ	1	»	
Ս. Կիրակոս	1	»	
Ս. Ստեփանոս	3	»	և 15 բորոտ
Ս. Դոմետիոս	1	»	

Այս մեծ ու պզտիկ վանքերը անտարակոյս, ամէնքն ալ, Սիոնէն դէպի Յովսափատ նայող բլուրին վրայ հոս և հոն ցրուած էին. և որովհետև ուղեգիրը Յովսափատի ձորէն սկսած է իր դասաւորումը, այնպէս ցոյց կու տայ թէ ամէնքն ալ կը գտնուին Յովսափատ, մինչ իրականին մէջ, անոնցմէ ոմանք, ինչպէս նաև Ս. Ստեփանոս չինուած էին Սիոնի մէջ, և արդէն 15 բորոտներու յիշատակութիւնն ալ ցոյց կու տայ թէ Ս. Ստեփանոսի վանքը կառուցուած էր Դաւթի դրան մօտ, ուր կար նաև քաղաքին ուրկանոցը, որ 1875ին միայն տեղափոխուած է քաղաքէն դուրս։ Այս ապացոյցներու հանդէպ յայտնի սխալմըն է Հ. Լակրանժի ա՛յն ենթադրութիւնը որով կը ջանայ վերոգրեալ յիշատակարանին վկայութիւնը պատշաճեցնել Երուսաղէմի պարսպէն դուրս, Եւդոկիա թագուհիին չինած Ս. Ստեփանոս եկեղեցւոյն (տե՛ս Saint Etienne et son sanctuaire à Jérusalem, էջ 83)։ 850ին ալ, գաղիացի Բեռնարդոս վանականը կը տեղեկացնէ թէ Սիոնի մէջ կար Ս. Ստեփանոս անուամբ եկեղեցի մը, որ կը գտնուէր Վերնատան Եկեղեցւոյն արեւելեան կողմը. իր խօսքերն են հետեւեալները. «Ս. Ստեփանոս Սիոնի Մայր Եկեղեցւոյն ձախ կողմը կը գտնուի. ա՛յն լերան վրայ, որուն ստորոտն է Ակեղտամայն — Գեհոն արեան, ուր կայ օտարականաց գերեզմանը». 1145ին, 1360ին, երկու անանուն ուղեւորներ ևս, մէկը սլաւ, կը յիշատակեն Սիոնի Ս. Ստեփանոս եկեղեցին։ Այս օտար յիշատակարաններն որքան որ ունենան իրենց անորոշ կողմերը, սակայն և այնպէս անոնք հիմնապէս միաձայն են և կը հաստատեն Սիոնի Ս. Ստեփանոս վանքը։

3. Ազգային յիշատակարաններ Սիոնի Ս. Ստեփանոսի վանքի մասին

Նոյն վանքի ծագման պարագան դժուար է հաստատել ազգային յիշատակարաններով, բայց կատարեալ իրականութիւն մ'է